# ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
# ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

## Կ. ՄԱՐՔՍԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱԽԱՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Ա. Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*1. Հայկական վերածնության և X—XIII դդ. Հայաստանում կապիտալի նախասկզբնական կուտակման բանավեճի ընթացքը: Մի քանի տարի է, ինչ բանավեճ է գնում Հայկական վերածնության և այդ կապակցությամբ Հայաստանում իր տեղի ունեցած կապիտալի նախասկզբնական կուտակման մասին[1]։*

*Բանավեճը անշուշտ ունեցավ իր դրական արդյունքները. դրված հարցի բացասական կամ դրական լուծմանը հանգելու համար մեր պատմաբանները, արվեստագետները, փիլիսոփաները, տնտեսագետները, գրականագետները զգալի ջանքեր թափեցին հետազոտելու մատենագրական աղբյուրները, պեղումների արդյունքները, վաղ և ուշ միջնադարի դրականությունը, փիլիսոփայությունը, ճարտարապետությունը, բժշկությունը և նոր լույս սփռելու Հայաստանի X—XIII դդ. պատմության վրա։ Բանավեճը հետաքրքրություն առաջ բերեց մեր գիտական հասարակայնության շրջաններում։*

*Իր վերջին ելույթում ընկ. Վ. Զալոյանը թվարկում է X—XIII դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող պատմական կոնկրետ փաստեր և հայտարարում, որ թվարկած փաստերի նկատմամբ «չկա և ոչ մի վեճ»[2]։ Որո՞նք են այդ փաստերը. X—XIII դդ. Հայաստանում թե՛ հին և թե՛ նոր առաջացած քաղաքների զարգացումը, արհեստների անջատումը գյուղատնտեսու-*

---

[1] *Ընթերցողները կարող են ծանոթանալ բանավեճին հետևյալ նյութերից.*
*Վ. Զալոյան, Վերածնունդի պրոբլեմը Հայաստանում, «Սովետական գրականություն և արվեստ», 1956, № 3, էջ 139—249։ Դիսկուսիա. Նվիրված վերածնության հարցերին (Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ.), 1955, № 1, էջ 105—115։ Վ. Կ. Զալոյան, Հայկական վերածնության մասին. Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 12, էջ 85—114։ Վ. Կ. Զալոյան, Հայկական վերածնության մասին. Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1956, № 4, էջ 82—106։ Բ. Առաքելյան, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը IX—XIII դդ. և վերածնության հարցը, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 5, էջ 81 118։ Հ. Գարրիելյան, Հայկական վերածնության հարցի շուրջը, «Տեղեկագիր», 1956, № 6, էջ 81—105։ Լ. Խաչիկյան, Արհեստագործության վիճակն ու զարգացման ասպիճանը Հայաստանում X—XIV դդ. «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 29—50։ Հ. Թումանյան, Կապիտալի այսպես կոչված նախասկզբնական կուտակման մասին Հայաստանում X—XIII դդ., «Տեղեկագիր», 1958, № 8, 53—65։ Վ. Զալոյան, Նամակ խմբագրության։ Խմբագրության կողմից. «Տեղեկագիր», 1958, № 11, էջ 103—112։ Աշոտ Հովհաննիսյան, Արդյոք միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կապիտալի նախասկզբնական կուտակում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 203—223։ Վ. Կ. Զալոյան, Նորից կապիտալի նախասկզբնական կուտակման և հարակից հարցերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 152—171։*

[2] *Վ. Կ. Զալոյան, Նորից կապիտալի նախասկզբնական կուտակման և հարակից հարցերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 152։*

թյունից, նրանց մասնագիտացումը և ծավալումը, առևտրական-վաշխառուական կապիտալի և առևտրա-վաշխառուական խավի ուռճացումը, փողի դերի բարձրացումը և դրամական օպերացիաների աճը, գյուղացիների ունեզրկումը, նրանց փախուստը դեպի քաղաքները և այդ քաղաքներում «чернь»-ի առաջացումը, ճորտացման պրոցեսի առկայությունը, և, ինչպես բանավեճի հրապարակած նյութերն են բացահայտում, կապիտալիզմի «սաղմերիչ՝ կապիտալիստական պարզ կոոպերացիայի և մանուֆակտուրայի անդամ հետքերի բացակայությունը։

Բայց չնայած դրան, բանավեճը շարունակվում է. ինչո՞ւ։ Նույն այդ ելույթում ընկ. Զալոյանը մեղադրում է իր ընդդիմախոսին, որ նրա մոտ «չկա հրատակ պատկերացում կապիտալի նախասկզբնական կուտակման մասին ընդհանրապես»։ Մեղադրանքը, ինչպես կտեսնենք, սխալ է հասցեագրված, հուսով ենք, որ այդ բանում ընթերցողը կհամոզվի մեր հետագա շարադրանքից։ Սակայն դրանից անկախ, ընկ. Վ. Զալոյանի պահանջը բանավեճի ներկա էտապում—քննել և տեսնել ո՞ւմ մոտ է բացակայում կապիտալի նախասկզբնական կուտակման մասին հստակ պատկերացումը, մենք համարում ենք միանգամայն տեղին, որովհետև ներկայումս, երբ հիմնականում վերացել են փաստական նյութի մասին եղած տարաձայնությունները, բանավեճի շարունակման պատճառը կարող են լինել վիճող կողմերի տարբեր տեսական դիրքավորումները, մեթոդոլոգիան։ Ահա թե ինչու բանավեճի ընթացքը պահանջ է առաջադրում քննարկել Հայաստանում X—XIII դդ. կապիտալի նախասկզբնական կուտակման կողմնակիցների ընդհանուր տեսությունը, կամ ինչպես ընկ. Վ. Զալոյանն է ասում՝ «մեթոդոլոգիական կոնցեպցիան» կապիտալի նախասկզբնական կուտակման մասին առհասարակ։ Վիճարկելով իրեն առարկողների տեսական, մեթոդոլոգիական դիրքավորման ճշտությունը, ընկ. Վ. Զալոյանը հայտարարում է, որ իր պաշտպանած մեթոդոլոգիական կոնցեպցիան նախասկզբնական կուտակման պրոցեսի մասին հենվում է «միակ գիտական ըմբռնման» վրա։

Այդպե՞ս է արդյոք։

Այս հարցի լուսաբանմանն է նվիրված մեր այս հոդվածը։

2. Ընկ. Վ. Զալոյանի «մեթոդոլոգիական կոնցեպցիայի» կամ կապիտալի նախասկզբնական կուտակման նրա շարադրած տեսության հիմնական կողմերը։ Անհրաժեշտ է առայժմ պարզել, թե ինչպես է պատկերացնում և շարադրում ընկ. Վ. Զալոյանը Կ. Մարքսի նախասկզբնական կուտակման տեսությունը։ Կանգ առնենք այդ տեսության հիմնական, վճռական կողմերի վրա այնպես, ինչպես շարադրում է ընկ. Վ. Զալոյանը։

«Կ. Մարքսը իր «Կապիտալ»-ում,— գրում է ընկ. Վ. Զալոյանը,— շատ որոշակի ցույց է տալիս, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը պետք է կապել ոչ թե կապիտալիզմի այլ ֆեոդալիզմի հետ»[3]։ Մի այլ տեղ ընկ. Վ. Զալոյանը նշում է. «Անվիճելի է, որ նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում գործում է ոչ թե արտադրության կապիտալիստական եղանակը, այլ մինչկապիտալիստական պարզ ապրանքային տնտեսությունը»[4]։

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 162։
[2] «Տեղեկագիր», 1955, № 12, էջ 103։
[3] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 153։
[4] Նույն տեղում։

Ընկ. Վ. Զալոյանը գտնում է, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը պետք է բնության առնել ֆեոդալիզմի շրջանակներում։ Ի՞նչ է տեղի ունենում ֆեոդալիզմի շրջանակներում կամ ֆեոդալիզմի ընդերքում, կամ ավելի ճիշտ նրա զարգացման էտապում, ուր գործում է պարզ ապրանքային տնտեսությունը։

Ընկ. Վ. Զալոյանն ասում է, որ տեղի է ունենում ա) արտադրության միջոցներից արտադրողի անջատման պրոցեսը և բ) հսկայական հարստությունների կուտակումը փոքրամասնության ձեռքում. առաջացած այս երկու նախադրյալները ունեզրկումը և փոքրամասնության ձեռքում հարստությունների կուտակումը, պատմական նախադրյալներ են հանդիսանում արտադրության կապիտալիստական եղանակին անցնելու համար։ Հենց այդ պրոցեսներն էլ՝ ունեզրկումը և հարստությունների կուտակումը, ըստ ընկ. Վ. Զալոյանի, կազմում են կապիտալի նախասկզբնական կուտակման բովանդակությունը, էությունը։ «Այսպես ուրեմն,— գրում է ընկ. Վ. Զալոյանը,— Կ. Մարքսի ուսմունքի համաձայն կապիտալի այսպես կոչված նախասկզբնական կուտակումը անմիջական արտադրողի անջատումն է արտադրության միջոցներից, դա հրսկայական հարստությունների կուտակումն է փոքրամասնության ձեռքում և արտադրության միջոցներից զուրկ սոցիալական խավի երևան գալը, մի խավ, որ ազատ է իր աշխատուժը վաճառելու գործում»[1]։

Պետք է ընդգծել, որ ընկ. Վ. Զալոյանը սկսած 1954 թ. մինչև 1961 թ. հավատարիմ է մնացել իր այս ձևակերպմանը և հետևողական ու համառ կերպով շեշտում է, թե Կ. Մարքսը կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը շարադրում է, որպես 1) «Արտադրողի անջատումը արտադրության միջոցներից» և 2) «Հարստությունների կուտակումը փոքրամասնության ձեռքում։ Արտադրության միջոցներից անջատված արտադրողները—դրանք ունեզրկված գյուղացիներն են, իսկ փոքրամասնությունը, որի ձեռքում կուտակվում են հարստությունները, դրանք առևտրականներն են ու վաշխառուները՝ առևտրա-վաշխառուական կապիտալը։

Ինչպե՞ս է տեղի ունենում այս նախադրյալների առաջացմամբ ֆեոդալիզմի քայքայումը և անցումը կապիտալիստական արտադրաեղանակին։ Առաջադրած հարցին ընկ. Վ. Զալոյանը հետևյալ կերպ է պատասխանում. հենց որ վաշխառուական կապիտալը կապվում է արտադրության հետ, ըստ ընկ. Վ. Զալոյանի տեղի է ունենում ֆեոդալիզմի քայքայում։ Այսպես, օրինակ. առևտրա-վաշխառուական կապիտալը հետզհետև ուժեղանալով «իրենից կախման մեջ էր դնում տոհմական-ֆեոդալական կալվածքները։ Հաճախ այդ կախման հարաբերությունները այնպիսի ձևեր էին ընդունում, որ ֆեոդալական կալվածքները մեկը մյուսի հետևից դառնում էին առևտրա-վաշխառուական խավի սեփականություն։ Ֆեոդալների ժառանգական հողատիրությունը—նրանց գյուղերն ու կալվածքները դառնում էին վաճառքի առարկա։ Դա ոչ այլ ինչ էր,

[1] «Տեղեկագիր», 1955. № 12, էջ 103։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 102, 103, 104, 1958, № 11, էջ 103 106, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3. էջ 134։

[3] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 139։

ևթե ոչ ֆեոդալիզմի քայքայումն»[1]։ Ընկ. Վ. Զալոյանն ընդգծում է, որ ֆեոդալիզմի քայքայման պրոցեսը հենց նոր սեփականատերերի՝ առևտրա-վաշխառուական խավից նոր մեծատունների առաջանալն է, «անկախ այն բանից,— նշում է ընկ. Վ. Զալոյանը,— որ նրանք (այդ սեփականատերերը—Ա. Ե.) միաժամանակ չէին խորշում գյուղացիներին ֆեոդալական եղանակով «հարկման և կլոնքման ենթարկելուց»[2]։

Այսպիսով, առաջին նախադրյալը՝ առևտրա-վաշխառուական կապիտալը քայքայում է ֆեոդալիզմը նրանով, որ տեր է դառնում ժառանգական ֆեոդալների կալվածքներին։

Իսկ ինչո՞ւմն է արտահայտվում երկրորդ նախադրյալի՝ ունեզրկված գյուղացիության քայքայիչ ներգործությունը ֆեոդալիզմի նկատմամբ։ Պետք է ասել, որ այս հարցին մենք պարզ պատասխան չենք ստանում. ընկ. Վ. Զալոյանը շեշտը դնում է գյուղացիների ունեզրկման հետևանքով чернь-ի առաջացման պրոցեսի վրա, որպես նախադրյալ կապիտալիստական արտադրության առաջացման։ Բայց թե ինչպե՞ս և ո՞ր տեղ էին օգտագործվում այդ խավին պատկանող «վարձկաններն ու մշակները», և ինչպե՞ս էին նրանք քայքայում ֆեոդալիզմը, այդ հարցին պարզ ու հիմնավորված պատասխան չենք ստանում։

Կապիտալի նախասկզբնական կուտակման այս կոնցեպցիան ընկ. Վ. Զալոյանը համարում է Կ. Մարքսի կոնցեպցիան։ Կիրառելով այդ կոնցեպցիան X—XIII դդ. Հայաստանում տեղի ունեցած պրոցեսների բնութագրման վերաբերմամբ, նշելով, որ Հայաստանում այդ ժամանակ կար և՛ առևտրա-վաշխառուական կապիտալ, և՛ գյուղացիների ունեզրկում, ընկ. Վ. Զալոյանը եզրափակում է, որ ուրեմն Հայաստանն այդ ժամանակաշրջանում ապրում էր կապիտալի նախասկզբնական կուտակման էտապը։

Ծանոթանալով կապիտալի նախասկզբնական կուտակման ընկ. Վ. Զալոյանի այս կոնցեպցիային, անփորձ, անտեղյակ ընթերցողը կարող է պահ մի վարանել և ասել. ինչո՞ւ են քննադատում ընկ. Վ. Զալոյանի կոնցեպցիան. մի՞թե Կ. Մարքսը չի ասել, որ ֆեոդալիզմի ընդերքում առաջանում են կապիտալիստական արտադրանքի պատմական նախադրյալները, մի՞թե Մարքսը չի ասել, որ այդ նախադրյալներն են՝ առևտրա-վաշխառուական կապիտալը և ունեզրկված գյուղացիությունը. մի՞թե ընկ. Վ. Զալոյանի կողմից Մարքսից բերած քաղվածքները կապիտալի նախասկզբնական կուտակման էության մասին ճիշտ չեն. մի՞թե Մարքսը չի ասել, որ ֆեոդալիզմի ընդերքում առաջացած կապիտալիստական արտադրանքի պատմական նախադրյալները քայքայում են ֆեոդալիզմը. և վերջապես քանի որ Հայաստանում X—XIII դդ. առկա են եղել առևտրա-վաշխառուական կապիտալը և արտադրողների ունեզրկումը, մի՞թե ճիշտ չէ ընկ. Վ. Զալոյանը, պնդելով, որ Հայաստանը այդ դարերում ապրել է կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանը։

Այս հարցերի պատասխանը ստանալու համար դիմենք Կ. Մարքսի աշխատություններին։

3. Կ. Մարքսի կապիտալի նախասկզբնական կուտակման տեսության հիմնական կետերը։ *ա) Նախասկզբնական կուտակման կապը կապիտալիզմի հետ.*

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 160 (ընդգծումները մերն են—Ա. Ե.)։
[2] Նույն տեղում, էջ 156։

Նախ և առաջ, ինչի՞ հետ է կապում Կ. Մարքսը նախասկզբնական կուտակումը։ «Կապիտալի» 24-րդ գլուխը՝ «Այսպես կոչված նախասկզբնական կուտակումը», սկսվում է մի ենթագլխով. «Նախասկզբնական կուտակման գաղտնիքը», որի հենց առաջին պարբերության մեջ Մարքսն ասում է. «...Կապիտալիստական կուտակմանը նախորդել է «նախասկզբնական կուտակումը... մի կուտակում, որն արտադրության կապիտալիստական եղանակի ոչ թե հետևանքն է, այլ նրա ելակետը»[1]։ Նույն ենթագլխում Կ. Մարքսը նշում է. «Նա «նախասկզբնական» պրոցես է, որովհետև կազմում է կապիտալի և նրան համապատասխանող արտադրության եղանակի նախապատմությունը», որ նախասկզբնական կուտակման պրոցեսը դա—«Կապիտալիստական հարաբերություն ստեղծող պրոցես է»[2]։

Տասնյակ վկայություններ կարելի է բերել «Կապիտալից», ինչպես նաև Կ. Մարքսի այլ աշխատություններից, որոնք պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ հակառակ ընկ. Վ. Ջալոյանի պնդումին՝ Կ. Մարքսը նախասկզբնական կուտակումը կապում էր կապիտալիստական արտադրաեղանակի ստեղծման, առաջացման, սկզբնավորման հետ։ Եվ այլ կերպ էլ չէր կարող լինել. մինչև 24-րդ գլուխը Կ. Մարքսը վերլուծման է ենթարկում կապիտալիստական արտադրության և վերարտադրության օրինաչափությունները։ «Թեորիայես ելակետ ունենալով իրերի փաստական դրությունը», այսինքն կապիտալիստի և բանվորի փաստական առկայությունը, և ժամանակավորապես հետաձգելով դրանց մեջ գոյություն ունեցող հարաբերության պատմական ծագման հարցի ուսումնասիրությունը, քսանչորսերորդ գլխում Կ. Մարքսը անդրադառնում է այդ պրոբլեմին, որի մասին հարցադրման կարգով նա ակնարկում է դեռ դրանից առաջ՝ «Փողի փոխարկումը կապիտալի» վերնագրված գլխում. «Բնությունը մի կողմում չի արտադրում փողատերեր ու ապրանքատերեր և մյուս կողմում լոկ աշխատուժի տերեր։ Այս հարաբերությունը ոչ բնության իսկ ստեղծած հարաբերությունն է, ոչ էլ մի այնպիսի հասարակական հարաբերություն, որ ընդհանուր լիներ պատմական բոլոր ժամանակաշրջանների համար։ Ակներև է, որ այդ հարաբերությունն ինքը նախընթաց պատմական զարգացման հետևանք է, տնտեսական բազմաթիվ հեղաշրջումների արդյունք, հասարակական արտադրության մի ամբողջ շարք ավելի հին ֆորմացիաների կործանման արդյունք»[3]։

Քսանչորսերորդ գլխում Մարքսը ուսումնասիրում է ժամանակակից արդյունաբերական և գյուղատնտեսական պրոլետարիատի ծագումը (էջ 746—775), կապիտալիստական ֆերմերների ծագումը (էջ 775—777), արդյունաբերական կապիտալիստի ծագումը (էջ 782—794), այլ խոսքով կապիտալիստական արտադրաեղանակի ծագման պատմական պրոցեսը։

Այսպիսով, Մարքսի տնտեսական ուսմունքի մեջ կապիտալի նախասկզբնական կուտակման տեսությունը բացահայտում է կապիտալիստական արտադրական հարաբերության պատմական ծագումը, նախասկզբնական կուտակումը կապված է կապիտալիստական արտադրաեղանակի ծագման, կամ, այլ խոսքով, կապիտալիստական կացութաձևի սկզբնավորման հետ։

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ. հատ. I, Երևան, 1954, էջ 746։
[2] Նույն տեղում, էջ 747։
[3] Նույն տեղում, էջ 180։

բ) Արդյո՞ք կապիտալի նախասկզբնական կուտակումը տեղի է ունեցել միայն ֆեոդալիզմի շրջանում: Ընկ. Վ. Զալոյանի քննարկվող կոնցեպցիայի մի այլ բնորոշ կողմն այն է, որ, ըստ նրա «Կապիտալի նախասկզբնական կուտակումը... պետք է քննության առնել... ոչ թե կապիտալիզմի, այլ ֆեոդալիզմի շրջանակներում»[1]: Այդ նույն միտքը ընկ. Վ. Զալոյանը պաշտպանել է դեռևս 1954—55 թթ. «Մենք ցանկանում ենք ընդգծել այն միտքը,— ասում է ընկ. Վ. Զալոյանը,— որ նախասկզբնական կուտակման պատմությունը վերաբերում է ֆեոդալական ֆորմացիայի հասարակության զարգացման պատմության մի որոշ աստիճանի, որ նախասկզբնական կուտակման պրոցեսը կատարվում է հենց ֆեոդալական հասարակության սահմաններում»[2]:

Արդյոք այդպե՞ս են նայում գործին Կ. Մարքսը, մարքսիստները. արդյո՞ք նախասկզբնական կուտակման պրոցեսը, կապիտալի նախասկզբնական կուտակման մեթոդների կիրառումը սահմանափակվել է միայն ֆեոդալիզմի շրջանակներով:

Կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսի առաջին կողմը՝ փոդային կապիտալի կուտակումը, նշանավորվում է ոչ միայն առևտրա-վաշխառուական կապիտալի զարդացման «նորմալ մեթոդներով», այլև այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են՝ դաղութային սիստեմը, առևտրական պատերազմները, պետական փոխառությունները, հարկային սիստեմը և պրոտեկցիոնիզմի սիստեմը, որոնց մասին, ի դեղ, ընկ. Վ. Զալոյանը ոչ մի խոսք չի ասում: Ո՞ր դարերում են կիրառվել այս մեթոդները, արդյո՞ք ֆեոդալիզմի շրջանակներում, թե նաև կամ ավելի շուտ դերաղանցապես նրանից՝ ֆեոդալիզմի շրջանակներից դուրս: Կանդ առնելով դաղութային սիստեմի վրա Կ. Մարքսը դրում է. «Հոլանդական դաղութային տնտեսության պատմությունը—իսկ Հոլանդիան XVII դարի կապիտալիստական օրինակելի երկիր էր—ծավալում է դավաճանությունների, կաշառումների, մարդասպանությունների ու ստորությունների մի չտեսնված պատկեր: Չկա ավելի բնորոշ մի բան, քան հոլանդացիների կիրառած մարդադողության սիստեմը Ցելեբեսում՝ ծավա կղզում ստրուկների կադրերը համալրելու նպատակով»[3]: Այս բոլորը տեղի է ունենում XVII և XVIII դարերում. արդյո՞ք ֆեոդալիզմի պատմական շրջանակների մեջ էին մտնում այդ դարերը: Նույնը տեղի է ունենում Անդլիայում, ուր դաղութային սիստեմը ծավալվում է սկսած XVII դարի վերջերից ընդհուպ մինչև XIX դարը. մի՞թե այդ ևս մտնում էր ֆեոդալիզմի շրջանակների մեջ:

Նախասկզբնական կուտակման մոմենտներ են առևտրական պատերազմները, որոնք ծավալվել են նույնպես XVI դարից սկսած մինչև XVIII դարի վերջերը, պետական փոխառությունները կամ պետական պարտքը, որը դառնում էր «նախասկզբնական կուտակման ամենազորեղ լծակներից մեկը»[4]—ծավալվում էր նույնպես XVII դարից սկսած ընդհուպ մինչև XIX դարի սկիզբը. «Վաշխառուները պետությանը փոխառություն տալով հսկայական կապիտալ էին դիզում: Նրանք ըստ էության պետությանը ոչինչ չէին տալիս, քանի որ նրանց կողմից փոխ տված դումարը դարձնում էին պետական փոխառության պարտատոմս, իսկ այդ պարտատոմսերը գործում էին կապիտալիստական

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, էջ 133:
[2] «Տեղեկագիր», 1955, № 12, էջ 103 (ընդգծումները մերն են—Ա. Ե.):
[3] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 784—785:
[4] Նույն աեղում, էջ 787:

շրջանառության մեջ, ինչպես կանխիկ դրամ։ Մեծ Բրիտանիայի պետական պարտքը 1697 թ. մինչև 1815 թ. տալել էր 25 միլիոն ֆունտ ստերլինգից մինչև 860 միլիոն ֆունտ ստերլինգի[1]։

Հարկային սիստեմը, որը «դարձավ ազգային վարկի սիստեմի անհրաժեշտ լրացումը» (Կ. Մարքս), և որը մի մեթոդ էր «հասարակական հարստությունը կապիտալի փոխարկելու պրոցեսում»—նույնպես ծավալվեց այդ դարերում, ակներևաբար դարձյալ «ֆեոդալիզմի շրջանակներից» դուրս։ Վերջապես հովանավորման սիստեմը, որը «մի արհեստական միջոց էր գործարանատերեր պատրաստելու և անկախ աշխատավորներին սեփականազրկելու համար»[2]—նույնպես ծավալվեց XVII և XVIII դարերում ընդհուպ մինչև XIX դարի առաջին կեսը։ Հայտնի է, որ Ռուսաստանում կապիտալի նախասկզբնական կուտակման հիշյալ մեթոդները կիրառվել են անգամ XX դարի սկզբներին[3]։

Վերցնենք հիմա կապիտալի կուտակման պրոցեսի երկրորդ կողմը՝ աշխատավորների բռնի անջատումը արտադրության միջոցներից և վերածումը պրոլետարների։ Եվրոպական երկրներում այս պրոցեսը տեղի է ունեցել՝ XV դ. վերջից և տևել է ընդհուպ մինչև XVIII դ. վերջը—Անգլիայում, XVIII դ. երկրորդ կեսից մինչև XIX դ. սկիզբը—Գերմանիայում, XVI—XVIII դդ.—Ֆրանսիայում, XIX դ. երկրորդ կեսում—Ռուսաստանում, որտեղ գյուղացիական ռեֆորմը հանդես եկավ որպես գյուղացիներին արտադրության միջոցներից անջատելու մեթոդ։

Այսպիսով տեսնում ենք, որ նախասկզբնական կուտակման պրոցեսը կատարվում է—հակառակ ընկ. Վ. Զայոյանի այն պնդումին թե իբր «...Նախասկզբնական կուտակման պրոցեսը կատարվում է հենց ֆեոդալական հասարակության սահմաններում»[4]—գերազանցապես կապիտալիստական դարաշրջանին սկսվելուց հետո, այսինքն XVI դ. հետո։ Կապիտալի նախասկզբնական կուտակման կեղտոտ, արյունոտ մեթոդների համար պատմությունը անարգանքի այունին է գամել ոչ թե «ֆեոդալական ֆորմացիան», այլ կապիտալիզմը, կապիտալիստական հասարակարգը։ «Եթե փողը, Օժյեի ասելով, «առաջ է գալիս մի այտի վրա արյան բնական բծով», ապա նորածին կապիտալի բոլոր ծակոտիներից, ոտից մինչև գլուխ, արյուն ու կեղտ է հոսում»[5]—գրում էր Կ. Մարքսը։

Պահանջել, որպեսզի կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը քննարկվի միայն ֆեոդալիզմի շրջանակներում, դա նշանակում է մի կողմից անտեսել ու հաշվի չառնել այն բոլոր մեթոդները, որոնցով կատարվում է այդ կուտակումը և մյուս կողմից վերցնել կապիտալիզմից այն մեղադրանքը, որն իրավամբ հասցեագրվում է նրան. «Արդյունաբերության ասպետները,—Մարքսի բնութագրմամբ,— դուրս մղեցին սրի ասպետներին և բարձրացան, օգտվելով նույն կեղտոտ միջոցներից, որոնք մի ժամանակ հռոմեական ազատ

[1] Դ. Ա. Կոզլով, Արտադրության կապիտալիստական եղանակի նախապատրաստումը, Երևան, 1947, էջ 66։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 790։
[3] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, ռուսերեն հրատ., հատ. 13, էջ 108։
[4] «Տեղեկագիր», 1953, № 12, էջ 103։
[5] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 791։

արձակվածներին (իմա՝ նախկին ստրուկներին—Ա. Ե.) հնարավորություն էին տալիս իրենց պատրոնների տերերը դառնալու»[1]։

դ) Նախասկզբնական կուտակման էությունը—«բևեռացումն է»։ Կապիտալիստական հարաբերությունները, կապիտալիստական արտադրաեղանակի սաղմերը հանձին կապիտալիստական պարզ կոոպերացիայի, որը Կ. Մարքսի արտահայտությամբ «պատմականորեն ու տրամաբանորեն կազմում է կապիտալիստական արտադրության ելակետը»[2] և ապա մանուֆակտուրային ձեռնարկությունների, առաջ են եկել ֆեոդալիզմի ընդերքում սկսած XIII—XIV դդ.։ Դրանց առաջանալը հետևանք էր ֆեոդալիզմի շրջանակներում արտադրողական ուժերի զարգացման, հասարակական աշխատանքի բաժանման աճի ու խորացման, որոնց արտահայտությունն էին արհեստի բաժանումը գյուղատնտեսությունից, մասնագիտացումը արհեստագործության մեջ թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում, շուկաների ընդլայնումը, առևտրի զարգացումը, մրցման հետևանքով արհեստավորների, գյուղական արտադրողների սոցիալական շերտավորումը—վարպետի ձեռնարկատեր դառնալը և միաժամանակ ուրիշների վարձու բանվոր դառնալը, գյուղատնտեսության մեջ՝ կապիտալիստական ֆերմերի առաջ գալը և վարձու աշխատողների շահագործումը կապիտալիստական ֆերմաներում։ Դրանք, Կ. Մարքսի արտահայտությամբ, կապիտալիստական արտադրության առաջին սաղմերն էին, որոնք տեղ-տեղ, ցարուցրիվ, սպորադիկ կերպով առաջ էին եկել և զարգանում էին XIV և XV դդ. Միջերկրական ծովի առանձին քաղաքներում։ Աշխարհագրական մեծ հայտնագործություններից և առևտրական ճանապարհների Միջերկրական ծովից Ատլանտյան օվկիանոս տեղափոխվելուց հետո Անգլիայում, Ֆլանդրիայում, Հոլանդիայում, Իսպանիայի մի շարք քաղաքներում, ինչպիսին էր, օրինակ, Բարսելոնան, նույնպես զարգանում են կապիտալիստական արտադրաեղանակի այդ սաղմերը։ Մեր նպատակը չէ այստեղ շարադրել եվրոպական երկրներում XIV և XV դդ. մանուֆակտուրային կապիտալիստական ձեռնարկությունների պատմությունը, նրանց առաջացումը՝ առաջին հերթին խոշոր ծովային ու ցամաքային առևտրական հաղորդակցության կենտրոններում և գյուղական արվեստների հիման վրա հետո քաղաքների համքարական սահմանափակումներից։ Առայժմ կարևորը մեզ համար XIV—XV դդ. կապիտալիստական ձեռնարկությունների առկայությունը շեշտելն է։ «Արդյունաբերական կապիտալիստի ծագումը աչքի չի ընկնում այն աստիճանականությամբ—գրում է «Կապիտալի» հեղինակը,— որով բնորոշվում է ֆերմերի ծագումը։ Անկասկած որոշ թվով համքարական մանր վարպետներ և էլ ավելի մեծ թվով մանր ինքնուրույն արհեստավորներ ու նույնիսկ վարձու բանվորներ սկզբում դարձել են սաղմնային կապիտալիստներ, իսկ հետո աստիճանաբար ընդարձակելով վարձու աշխատանքի շահագործումը և համապատասխանորեն ուժեղացնելով կապիտալի կուտակումը, դարձել են կապիտալիստներ (sans phrase) առանց վերապահումների»[3]։ Այդ դարերում գյուղատնտեսության մեջ էլ նույնպես սպորադիկ կերպով առկա էր վարձու աշխատանքը և ֆերմերը[4]։ Այսպես, օրինակ,

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 180։
[2] Նույն տեղում, էջ 339։
[3] Նույն տեղում, էջ 782։
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 775—776։

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Անգլիայում XIII—XIV դդ. գյուղատնտեսության մեջ ևս գործադրվել է վարձու աշխատանք. ազատ թողնված կամ փախստական գյուղացիներ, «ինքնուրույն գյուղացիության քայքայված ներկայացուցիչներ»։ Հարկավ չի կարելի չափազանցել վարձու աշխատանքի ծավալը անգլիական գյուղատնտեսության մեջ հիշատակված դարերում։ Հայտնի է, որ ճորտատիրությանը Անգլիայում վերջ դրվեց XIV դ. վերջում և XV դ.։ Անգլիայի գյուղական բնակչության գերակշռող մեծամասնությունը ինքնուրույն գյուղացիությունն էր։ Սակայն մեզ համար կարևորն այն է, որ կապիտալիստական հարաբերությունները սկզբնավորվում էին ոչ միայն արդյունաբերության, քաղաքային արտադրության մեջ, այլև գյուղատնտեսության, գյուղական արտադրության մեջ։

Կրկնում ենք, կապիտալիստական հարաբերությունները արդեն սկզբնավորվել էին արտադրության մեջ և դանդաղորեն, շատ դանդաղորեն զարգանում էին ֆեոդալական հասարակարգի ընդերքում։

Ի՞նչ կլիներ, եթե XVI դ. սկսած տեղի ունեցած չլիներ ժողովրդական մասսաների հանկարծակի փոխարկումը վարձկան բանվորների, նրանց աշխատանքի միջոցների փոխարկումը—կապիտալի, հսկայական դրամական հարստությունների կուտակումը շահագործողների ձեռքին, սրի, արյան, կեղտի միջոցներով ու մեթոդներով, այլ խոսքով ի՞նչ կլիներ, եթե Եվրոպայում XVI դ. սկսած տեղի ունեցած չլիներ կապիտալի նախասկզբնական կուտակումը—արդյո՞ք կզարգանային արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ արդեն առկա կապիտալիստական հարաբերությունները, արդյո՞ք տեղի կունենար անցում ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ։ Մարքսիզմ-լենինիզմը այս հարցին դրական պատասխան է տալիս—հիմնվելով հասարակական ֆորմացիաների զարգացման ու փոփոխման իր տեսության վրա։

Իրավի, ի՞նչ դեր խաղացին կապիտալի նախասկզբնական կուտակման բոլոր մոմենտները պատմության մեջ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու պրոցեսում։ Նախասկզբնական կուտակման բոլոր մոմենտները արագացրին արտադրության ֆեոդալական եղանակը կապիտալիստականի փոխարկվելու պրոցեսը և միաժամանակ կրճատեցին նրա անցման ստադիաները. շատ ու շատ դարեր պահանջվող պրոցեսը կատարվեց մեկ—մեկ ու կես դարում և Եվրոպայում XVI դ. սկսվեց կապիտալիստական դարաշրջանը. եթե XIV և XV դդ. կապիտալիստական արտադրության սաղմերն էին հանդիպում սպորադիկ կերպով հանձին կապիտալիստական պարզ կոոպերացիայի և ապա կապիտալիստական մանուֆակտուրային ձեռնարկությունների, ապա XVI դ. կեսից սկսած այդ ձեռնարկությունները մի շարք երկրներում (Անգլիա, Ֆլանդրիա) բնորոշ են դառնում և արտադրության մեջ տիրապետող հանդիսանում, սկսվում է իրոք նոր դարաշրջան, կապիտալիստական դարաշրջանը, կապիտալիզմի մանուֆակտուրային շրջանի հուժկու ծավալման դարաշրջանը։ Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց այդ դարի սկզբին, ո՞րտեղից, ի՞նչ աղբյուրներից և ինչո՞ւ հանկարծակի, մասսայարար աշխատանքի շուկա նետվեցին մարդկային հոծ բազմություններ, որպես պրոլետարներ և միաժամանակ հանկարծակի դիզվեցին հսկայական հարստություններ, կապիտալ, որն անմիջապես օգտագործեց ստեղծված պատմական իրադրությունը և զարկ տվեց, ուժեղ թափ հաղորդեց արդեն մինչ այդ արտադրության մեջ առաջացած նոր ձևի կապիտալիստական ձեռնարկությունների աննախընթաց զար-

դացմանը։ Ի՞նչ պատմական պրոցես էր դա. դա հենց այն պրոցեսն է, որ Մարքսը անվանում էր կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցես։

Ընկ. Վ. Զալոյանը այդ պրոցեսի էությունը, բովանդակությունը տեսնում է, ինչպես նշեցինք, երկու մոմենտում. առաջին՝ «արտադրողի անջատումը արտադրության միջոցներից», և երկրորդ՝ «հարստությունների կուտակումը փորրամասնության ձեռքին»։ Պետք է ասել, որ նման ձևակերպումով հատկանշված պրոցես տեղի է ունեցել և՛ անտիկ աշխարհում, և՛ ստրկատիրական Հռոմում, ուր արտադրողին անջատել են արտադրության միջոցներից և տեղի է ունեցել հարստությունների կուտակում փոքրամասնության ձեռքին։ Դա անհերքելի փաստ է։ Ի՞նչ եզրակացություն պետք է հանենք այդ փաստից. անտիկ աշխարհում և մասնավորապես Հռոմում, ըստ ընկ. Վ. Զալոյանի կոնցեպցիայի հետևողական կիրառման, նույնպես տեղի է ունեցել կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցես։ Հենց այս իսկ պատճառով է, որ բուրժուական պատմագիտության ցիկլիստական թեորիայի տեսաբանները (էդ. Մայեր և ուրիշներ), ինչպես և մարքսիզմի այլ հակառակորդներ խոսում էին անտիկ աշխարհի կապիտալիզմի մասին։ Մենք հեռու ենք ընկ. Վ. Զալոյանին մարքսիզմի թշնամիների շարքը դասելուց, բայց այս հանգամանքը չի փրկում կապիտալի նախասկզբնական կուտակման նրա տեսությանը հանդելու հակամարքսիստական եզրակացության։ Ընկ. Զալոյանի ձևակերպման մեջ պակասում է այն բնորոշը, որ յուրահատուկ էր այդ պրոցեսին միայն և միայն պատմական որոշ ժամանակաշրջանի համար։ Ո՞րն է այդ բնորոշը,— ոչ թե միայն արտադրողի արտադրության միջոցներից զրկվելը, այլ արտադրության միջոցներից բռնի կերպով սեփականազրկված արտադրողի աշխատուժը վաճառողի վերածվելը։ Նրա ոչ թե ստրուկ դառնալը (ինչպես այդ անտիկ աշխարհում էր), այլ պրոլետար դառնալը, որը բացակայում է ընկ. Վ. Զալոյանի ֆորմուլայի մեջ։ Մյուս կողմից—կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսի մեջ բնորոշ կողմը ոչ թե միայն հարստությունների կուտակումն է փոքրամասնության ձեռքին, այլ հասարակական արտադրամիջոցների, կենսամիջոցների վերածումը կապիտալի իրային տարրերի, կապիտալի, որ սկզբում հանդես է գալիս որպես փողային կապիտալ և որի բոլոր ծակոտիներից «ոտից մինչև գլուխ արյուն ու կեղտ է հոսում»[1] (Մարքսը նկատի ունի կապիտալի նախասկզբնական կուտակման մեթոդները)։ Այս բնորոշը, յուրահատուկը նույնպես բացակայում է ընկ. Վ. Զալոյանի ֆորմուլայի մեջ։ Կարելի է բերել շատ վկայություններ Մարքսից ու Լենինից՝ կապիտալի նախասկզբնական կուտակման մասին, որոնք արմատապես տարբերվում են ընկ. Վ. Զալոյանի սահմանումներից և որոնք հենց շեշտում են այն բնորոշը, որը յուրահատուկ էր նախասկզբնական կուտակման պրոցեսին։

Այսպես՝ անդրադառնալով կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսի բացահայտմանը Կ. Մարքսը նշում է. «Այսպիսով. կապիտալիստական հարաբերություն ստեղծող պրոցեսը ուրիշ բան չի կարող լինել, բայց եթե բանվորին իր աշխատանքի պայմանների սեփականությունից անջատելու պրոցեսը,— մի պրոցես, որը մի կողմից հասարակական արտադրության միջոցներ և կենսամիջոցներ դարձնում է կապիտալ, մյուս կողմից անմիջա-

[1] Կ. Մարքս. Կապիտալ, հատ. I, էջ 794։

կան արտադրողներին դարձնում է վարձու բանվորներ, հետևաբար, այսպես կոչված նախասկզբնական կուտակումը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտադրողին արտադրության միջոցներից անջատելու պատմական պրոցես։ Նա «նախասկզբնական» պրոցես է, որովհետև կազմում է կապիտալի և նրան համապատասխանող արտադրության եղանակի նախապատմությունը»[1]։ Կ. Մարքսը բացահայտում է այդ նախապատմության բովանդակությունը և շեշտում այդ պրոցեսի երկու կողմը—բևեռացումը. մի կողմից արտադրողների մասսայական ունեզրկումը և վարձու բանվորներ դարձնելը, մյուս կողմից՝ հասարակական արտադրական միջոցների կապիտալի վերածումը։ Նման բովանդակություն բացահայտելուց հետո է միայն, որ Մարքսը անում է իր եզրակացությունը։ Վերլուծության տվյալ աստիճանում Մարքսը շեշտը դնում է պրոցեսի մի կողմի վրա, անդրադառնալով հաջորդ ենթագլուխներում պրոցեսի մյուս բևեռի վրա—կապիտալի, կապիտալիստական դասակարգի ծագման վրա այդ ժամանակաշրջանում։ Վերլուծության այդ աստիճանով է պայմանավորված Մարքսի կողմից շեշտադրումը պրոցեսի մի կողմի վրա, «երբ մարդկանց ահագին մասսաներ հանկարծակի ու բռնությամբ կտրվում են իրենց գոյության միջոցներից և աշխատանքի շուկա են նետվում որպես օրենքից դուրս հայտարարված պրոլետարներ»։ «Այսպես կոչված նախասկզբնական կուտակումը» գլխի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ ենթագլուխներում Կ. Մարքսը բացահայտում է նախասկզբնական կուտակման պրոցեսի երկրորդ կողմը—հասարակական արտադրական միջոցների կապիտալի վերածումը, կապիտալիստական ֆերմերի և արդյունաբերական կապիտալիստի ծագումը՝ նույնպես այդ ժամանակաշրջանին հատուկ բռնի, արյան և այլ կեղտոտ մեթոդներով։ Կ. Մարքսը միշտ էլ շեշտել է «ժողովրդական մասսաների փոխարկումը վարձկանների և նրանց աշխատանքի միջոցների փոխարկումը կապիտալի»[3] որպես նախասկզբնական կուտակման անքակտելի կողմեր, բևեռներ։ Նույն բևեռացումը, կամ նախասկզբնական կուտակման երկու կողմերն է, շարադրում Վ. Ի. Լենինը 1913 թ. գրած իր «Կարլ Մարքս» հոդվածում, երբ ձևակերպում է կապիտալի նախասկզբնական կուտակման էությունը. «Նախասկզբնական կուտակումը ստեղծում է մի բևեռում «ազատ» պրոլետար, մյուս բևեռում՝ փողատեր, կապիտալիստ»[4]։

Մինչդեռ ընկ. Վ. Ջալոյանը կտրականապես պնդում է, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը փոխարկումը չէ վարձու բանվորների[5], այլ «արտադրողների զրկվելը արտադրության միջոցներից, այսպես ասած Kernь-ի, պրոլետարիատի այդ նախնիների առաջացումը քաղաքներում»[6]։

Ընթերցողը զգում է անշուշտ տարբերությունը. Մարքսը, Լենինը բացահայտում են. մանր արտադրողների բռնի անջատումը արտադրության միջոցներից և նրանց վերածումը պրոլետարների, նրանց նետումը աշխատանքային շուկան, նրանց փոխարկումը վարձու բանվորների, որը բնորոշ էր միայն պատմական որոշ ժամանակաշրջանի՝ կապիտալի նախասկզբնական կուտակ-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 747։
Նույն տեղում, էջ 749։
[3] Նույն տեղում, էջ 753։
[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 67։
[5] «Տնտեսագիր», 1958, № 11, էջ 106։
[6] Նույն տեղում, էջ 103։

ման ժամանակաշրջանի համար։ Ընկ. Վ. Զալոյանը բացահայտում է—արտադրողների զրկվելը արտադրության միջոցներից և чернь-ի առաջացումը քաղաքներում, որը սովորական երևույթ էր և՛ հին աշխարհում, և՛ Հռոմում, և՛ ամբողջ միջնադարում։ Ընկ. Բ. Առաքելյանը, մեջ բերելով Մարքսի և Էնգելսի ասածները, հանգամանորեն բացահայտեց այդ чернь-ի առաջացման պատճառները և տարբերությունը այդ чернь-ի և պրոլետարի միջև։ Այդ чернь-ի երևան գալը թե հին աշխարհում (հիշենք անտիկ աշխարհի լումպեն պրոլետարիատին) և թե միջնադարում «անխուսափելի էր ամեն բաղաքի ձևավորման ժամանակ» (Ֆ. Էնգելս), «օրավարձով աշխատողների կարիքը բաղաքներում—ստեղծեց սեագործների ամբոխը (чернь) (Կ. Մարքս)։ Թե՛ հին աշխարհում, թե՛ ամբողջ միջնադարում միշտ էլ տեղի է ունեցել շահագործվողների փախուստը դեպի քաղաք. «ամբողջ միջնադարի ընթացքում անընդհատ շարունակվում է ճորտերի փախուստը բաղաք» (Կ. Մարքս)։ և բաղաքներում чернь-ի առաջացումը։ Հենց ինքը ընկ. Վ. Զալոյանը հայտնում է, որ «գյուղացիների դաժան շահագործումը նրանց հասցնում էր աղբատացման, իսկ դրա հետևանքով նրանք փախչում էին գյուղերից։ Ուրեմն ինչի՞ հետևանքով էին այդ ճորտացման ենթակա գյուղացիները փախչում գյուղերից դեպի քաղաք. ընկ. Վ. Զալոյանի պատասխանն է.— դաժան շահագործման և աղբատացման պատճառով։ Սակայն դա նախասկզբնական կուտակման ժամանակի պրոցեսը չէ, երբ ոչ թե ճորտ (նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանը տեղի է ունենում ճորտատիրության վերացման պայմաններում), այլ մանր ինքնուրույն արտադրողն էր բռնի կերպով անջատվում արտադրության միջոցներից, նետվում աշխատանքի շուկան, որպես իր աշխատուժը վաճառող «ազատ պրոլետար» և որը օգտագործվում էր ծավալվող կապիտալիստական ձեռնարկություններում (մանուֆակտուրաներում, գյուղատնտեսության մեջ), ստեղծում հավելյալ արժեք, որպես արդեն կապիտալի կուտակման միակ աղբյուր։

Այս կապակցությամբ չենք կարող մեր զարմանքը չհայտնել ընկ. Վ. Զալոյանի՝ Մարքսին վկայակոչելու էդանակի առթիվ։ Ընկ. Վ. Զալոյանը գրում է, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը «ստրուկների ու ճորտերի անմիջական փոխարկումը չէ վարձու բանվորների»[1], չակերտների մեջ բերածը ըստ ընկ. Զալոյանի պատկանում է Մարքսին։ Իրոք, այդ բառերը կան Մարքսի մոտ, բայց ահա թե ինչ կապակցությամբ. «Կապիտալի կուտակման պատմական տենդենցը» ենթագլուխը, որտեղ Մարքսին հետաքրքրում է սեփականության ձևերի պատմական էվոլյուցիան և հեռանկարները, սկսվում է հետևյալ կերպ. «Այսպես ուրեմն, ինչի՞ն է հանգում կապիտալի նախասկզբնական կուտակումը, այսինքն նրա պատմական ծագումը։ Որչափով նա ստրուկների և ճորտերի անմիջական փոխարկումը չէ վարձու բանվորների, և, հետևապես, ձևի հասարակ հաջորդափոխումը չէ, նա նշանակում է միայն անմիջական արտադրողների սեփականազրկում, այսինքն սեփական աշխատանքի

[1] Բ. Առաքելյան. «Տեղեկագիր», 1956, № 6, էջ 96։
[2] Նույն տեղում, բերվում է ընկ. Բ. Առաքելյանի կողմից։
[3] «Տեղեկագիր», 1958, № 11, էջ 106։
[4] Նույն տեղում, 1955, № 12, էջ 93։

վրա հիմնված մասնավոր սեփականության քայքայում»[1]։ Այս մեջբերումն անելով ընկ. Վ. Ջալոյանը նախ դուրս է գցում «որչափով» բառը, և ապա շեշտը դնում է նրա վրա, որ իբր թե ըստ Կ. Մարքսի կապիտալի, նախասկզբնական կուտակման ժամանակ տեղի չի ունենում վարձու բանվորների ստեղծում։ Մինչդեռ Կ. Մարքսն այլ բան է ասում. նա նշում է, որ կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակ տեղի է ունենում ոչ թե ճորտի անմիջական փոխարկումը վարձու բանվորի, այլ ճորտությունից ազատագրված արտադրության միջոցների ինքնուրույն սեփականատիրոջ, անմիջական արտադրողների սեփականազրկումը և այդ ձևով, այդ միջոցով—վարձու բանվոր դառնալը։ Կ. Մարքսն այստեղ ոչ թե հերքում է պրոցեսի հետևանքը—փոխարկումը վարձու բանվորների, այլ մատնանշում է նաև զարգացման այն ուղիները, երբ ճորտը ազատագրվում է ճորտությունից, դառնում ինքնուրույն արտադրող, սեփականատեր, որի սեփականությունը խարսխվում է սեփական աշխատանքի վրա և ապա բռնի կերպով անջատվում սեփական արտադրության միջոցներից և փոխարկվում վարձու բանվորի։ Ուրեմն ճորտը ոչ թե անմիջապես է փոխարկվում վարձու բանվորի, այլ միջնորդապես՝ անցնելով ազատ, ինքնուրույն արտադրության միջոցների սեփականատիրոջ փուլը։

Այսպիսով ընկ. Վ. Ջալոյանի Մարքսից բերած քաղվածքը ոչ թե հերքում է կապիտալի նախասկզբնական կուտակման, որպես բևեռացման պրոցեսի մի կողմը—վարձու բանվորների, «օրենքից դուրս հայտարարված պրոլետարիատի առաջանալը», այլ ընդհակառակը. հաստատում այն։

դ) Ֆեոդալիզմի քայքայումը և առևտրա-վաշխառուական կապիտալի դերը այդ պրոցեսում. Վ. Ջալոյանը, ինչպես վերը տեսանք, ֆեոդալիզմի քայքայումը և նոր արտադրաեղանակի սկզբնավորումը վերագրում է ֆեոդալիզմի ընդերքում ծավալվող առևտրա-վաշխառուական կապիտալին, որը յուրահատուկ կապեր է հաստատում արտադրության հետ։ Ըստ որում, այդ կապերի մեջ ընկ. Վ. Ջալոյանը գերազանց տեղ է տալիս ֆեոդալական տիրույթների կլանմանը առևտրա-վաշխառուական կապիտալի կողմից. «...ֆեոդալական կալվածքները,— գրում է նա,— մեկը մյուսի հետևից դառնում էին առևտրա-վաշխառուական կապիտալի սեփականությունը[2], «ֆեոդալների հողատիրությունը, նրանց գյուղերն ու կալվածքները դառնում էին վաճառքի առարկա, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ ֆեոդալիզմի քայքայում»[3]։

Որպեսզի ընթերցողը հստակ պատկերացում ունենա թե ինչպիսի՞ տարբերություն կա ընկ. Վ. Ջալոյանի շարադրած դրույթի, ֆեոդալիզմի նման քայքայման ու նոր արտադրաեղանակի անցման, և Մարքսի դրույթի միջև, բավականաչափ միայն մեկ մեջբերում անելով Մարքսից։ Կ. Մարքսը նկարագրում է, թե ինչպես ստրկատերը կամ ֆեոդալը՝ ծանրաբեռնվելով պարտքերով, ընկնում է վաշխառության ցանցը, ավելի շատ է յուրացնում աշխատավորության աշխատանքը, անփոփոխ թողնելով արտադրության եղանակը։ «Կամ վերջիվերջո նա (ստրկատերը կամ ֆեոդալ սինյորը—Ա. Ե.) իր տեղը զիջում է վաշխառուին, որն ինքը դառնում է հողատեր կամ ստրկատեր, ինչպես հեծյալները հին Հռոմում։ Ինն շահագործողի տեղը, որի շահագործումն ավելի կամ պակաս չափով նահապետական էր, որովհետև գլխավորապես քաղաքական իշ-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I. էջ 794 (ընդգծումները մերն են—Ա. Ե.)։
[2] «Տեղեկագիր», 1935, № 12, էջ 102։
[3] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 160։

խանության միջոց էր, հանդես է գալիս մի խստասիրտ, հոգատանջ նորելուկ։ Բայց ինքը—արտադրության եղանակը չի փոխվում»[1]։

Ընկ. Վ. Զալոյանը վճռական ու բացառիկ նշանակություն է տալիս առևտրա-վաշխառուական կապիտալի քայքայիչ ներգործության դերին և պնդում է, թե առևտրական կապիտալի զարգացումը ինքնին քայքայում է ֆեոդալիզմը և ստեղծում կամ առաջացնում կապիտալիստական արտադրանեղանակ։ Այստեղ ընկ. Վ. Զալոյանը անտեսում է կամ շրջանցում է Կ. Մարքսի երկու շատ կարևոր, և քննարկվող հարցի կապակցությամբ վճռական նշանակություն ունեցող դիտողություններ։ Առաջին՝ «Բայց թե նա (առևտուրը—Ա. Ե.) որքան հեռու է տանում արտադրության հին եղանակի քայքայումը, այս ամենից առաջ կախված է այդ եղանակի ամրությունից և ներքին կազմությունից»[2]։ Այս դրույթը դրսևորում է Կ. Մարքսը Հնդկաստանի և Չինաստանի օրինակով[3]։ Երկրորդ՝ «Իսկ թե քայքայման այդ պրոցեսն ինչի՞ է հանգում, այսինքն արտադրության ի՞նչ նոր եղանակ է հնի տեղը բռնում, այս կախված է ոչ թե առևտրից, այլ հենց արտադրության եղանակի բնույթից[4]։ Սա շատ կարևոր դրույթ է, որը, կրկնում ենք, չի կարելի շրջանցել, այլ պետք է ճիշտ ընկալել։ Առևտրա-վաշխառուական կապիտալը զարգացել է նաև անտիկ աշխարհում ինչպես նաև միջնադարում. և ի՞նչ. անտիկ աշխարհում վաճառականական կապիտալի զարգացման հետևանքը լինում է ստրկատիրական արտադրանեղանակը, իսկ «արդի աշխարհում, ընդհակառակը, այն հանգում է արտադրության կապիտալիստական եղանակին։ Սրանից հետևում է,— նշում է Կ. Մարքսը,— որ իրենք այս հետևանքները դեռ բոլորովին այլ հանգամանքներով էլ են պայմանավորված, քան առևտրական կապիտալի զարգացումն է»[5]։

Այսպիսով Կ. Մարքսը պարզում է, որ առևտրական կապիտալի «զարգացումն ինքնըստինքյան բավարար չէ արտադրության մի եղանակի անցումը մի ուրիշ եղանակի իրագործելու և բացատրելու համար[6]։

Անցնենք վաշխառուական կապիտալին։ Թե՛ ստրկատիրական հասարակարգում, թե՛ ֆեոդալիզմի ժամանակ միայն վաշխառուական կապիտալի առկայությամբ ու զարգացմամբ արտադրության եղանակը չի փոխվում՝, սակայն, վաշխառուական կապիտալը քայքայում է թե մեծամեծներին, հողատերերին, և թե մանր արտադրողներին, արհեստավորներին, գյուղացիներին։ Այս քայքայումը, անշուշտ, հանգում է խոշոր փողային կապիտալների գոյացման ու համակենտրոնացման։ «Բայց,— նշում է Կ. Մարքսը,— թե այս պրոցեսն ի՞նչ չափով է վերացնում արտադրության հին եղանակը, ինչպես որ այս տեղի ունեցավ արդի Եվրոպայում, և թե արդյո՞ք նրա տեղը բռնում է արտադրության կապիտալիստական եղանակը, այդ ամբողջովին կախված է պատմական զարգացման աստիճանից և սրա հետ կապված կոնկրետ հանգամանք-

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս II, էջ 139 (ընդգծումները մերն են — Ա. Ե.)։

[2] Նույն տեղում, մաս I, էջ 319։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 320—321։

[4] К. Маркс, Капитал, т. 3, 1951, էջ 344 (ընդգծումը մերն է—Ա. Ե.)։

[5] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս I, էջ 319։

[6] Նույն տեղում, էջ. 313—314։

[7] Նույն տեղում, մաս II, էջ 139։

ներից»[1]։ Պետք է ասել, որ այս դրությը Կ. Մարքսը շատ անգամ է շեշտում և «Կապիտալում», և իր շատ այլ աշխատություններում։

Իր «Կապիտալիստական արտադրությանը նախորդող ձևերը» ձեռագիր աշխատության մեջ, որի մի մասը հրատարակվեց 1939 թ., Կ. Մարքսը, նորից անդրադառնալով առևտրական ու վաշխառուական կապիտալի դերին, կապիտալ, որն ուներ փողային հարստության ձև, նշում է. «Սակայն, սոսկ փողային հարստության առկայությունը և նույնիսկ նրա մի հայտնի աստիճանի նվաճած տիրապետությունը բնավ բավական չէ նրա համար, որպեսզի տեղի ունենա այդ փոխարկումը կապիտալի։ Այլապես հին Հռոմը, Բյուզանդիան և այլն, կվերջացնեին իրենց պատմությունը ազատ աշխատանքով և կապիտալով, կամ ավելի ճիշտ, դրանցով կսկսեին նոր պատմություն»[2]։

Որպեսզի առևտրա-վաշխառուական կապիտալը դառնա արտադրության նոր եղանակի «կազմիչ միջոց», անհրաժեշտ են այլ հանգամանքներ, կամ, ինչպես դիտում էր Կ. Մարքսը, դա «կախված է պատմական զարգացման աստիճանից ու սրա հետ կապված կոնկրետ հանգամանքներից»։ Որո՞նք են պատմական զարգացման որոշ աստիճանի հետ կապված կոնկրետ հանգամանքները։ Այդ հանգամանքներն են. աշխարհագրական մեծ հայտնագործությունները, համաշխարհային շուկայի հանկարծակի ընդարձակումը, շրջանառու ապրանքների բազմապատկվելը, գաղութային սիստեմը և այլն, որոնք ռևոլյուցիա առաջացրին առևտրի մեջ և հուժկու թափ հաղորդեցին վաճառականական կապիտալի զարգացմանը, հարստության փողային ձևի կուտակմանը։ Սա հանգամանքների դասավորումն էր մի բևեռում։

Ի՞նչ հանգամանքներ դասավորվեցին մյուս բևեռում. աշխատավորության, մանր արտադրողների բռնի և մասսայական անջատումը սեփական արտադրամիջոցներից և նրա վերածումը ազատ վարձու բանվորի։ Պատմական այս հանգամանքների առկայությունն է, որ կուտակված փողային հարստությանը—առևտրական կամ վաշխառուական հարստությանը փողի ձևով —օժանդակում, նպաստում է «դառնալ կապիտալ»։

Այսպիսով, առևտրա-վաշխառուական կապիտալը ոչ թե իր ինքնուրույն զարգացման հետևանքով բայբայեց ֆեոդալիզմը և խթան հանդիսացավ կապիտալիստական արտադրաեղանակի առաջացման, կամ ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման, այլ պատմական այդ հանգամանքների առկայության պայմաններում—շուկաների հանկարծակի ընդլայնում, գաղութային սիստեմ, գյուղացիության ունեզրկում և վերածում պրոլետարների,— հսկայական չափերով ուռճացավ, զարգացավ և միաժամանակ տիրապետեց արտադրությանը, միացնելով «ձեռքերի մասսան գործիքների մասսային, որոնք առաջուց իսկ առկա էին»։ Ահա այս դեպքում միայն առևտրա-վաշխառուական կապիտալը կամ փողային կապիտալը, փողային հարստությունը, տիրապետելով արտադրությանը, վերածվելով իսկական կապիտալի՝ արդյունաբերական կապիտալի, ծավալելով այս նոր կապիտալիստական արտադրական հարաբերությունները—բայբայում է վերջնականապես ֆեոդալիզմը և ամրապնդում նոր, կապիտալիստական արտադրաեղանակը, ապահովում անցումը հին

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III. մաս II, էջ 137 (ընդգծումը մերն է—Ա. Ե.)։

[2] Из неопубликованных рукописей К. Маркса, «Пролетарская революция». 1939, № 3, էջ 179 (ընդգծումը մերն է—Ա. Ե.):

[3] Նույն տեղում, էջ 180:

ֆեոդալական արտադրանքակից դեպի նոր, կապիտալիստական արտադրանքը։

Դ. Դրույթներ, որոնք իրոք անընդունելի են։ Վերջերս հրապարակած իր «Նորից կապիտալի նախասկզբնական կուտակման և հարակից հարցերի մասին» հոդվածում[1] ընկ. Վ. Զալոյանը բացասում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի կողմից առաջադրված մի շարք կարևոր դրույթներ, համարելով դրանք «անընդունելի» և «սխալ» «մարքսիզմի տեսակետից»։ Մենք չենք բաժանում ընկ. Վ. Զալոյանի այս գնահատականը. ավելին, մենք գտնում ենք, որ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի «Արդյոք միջնադարյան Հայաստանում տեղի է ունեցել կապիտալի նախասկզբնական կուտակում» հոդվածը[2] իր մեթոդոլոգիական մոտեցմամբ և փաստերի մարքսիստական-լենինյան գնահատմամբ արժեքավոր և միանգամայն ընդունելի է։

Անշուշտ ընկ. Աշոտ Հովհաննիսյանը կարիքը չունի որևէ մեկի «պաշտպանության»։ Եվ եթե մենք «միջամտում ենք» առաջադրված այդ հարցերի շուրջը ծագած բանավեճին, ապա միայն այն պատճառով, որ տեսնում ենք, թե ինչպես «օրը ցերեկով» տեղի են ունենում հարձակումներ ընդհանրական դարձած ու ճանաչված դրույթների վրա։

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր հոդվածում առաջադրել էր հետևյալ դրույթը. «Իհարկե, կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը չի կարելի նույնացնել կապիտալի կուտակման նորմալ պրոցեսի հետ. այս չի նշանակում սակայն, թե այդ պրոցեսները իրարից տարանջատված են դարերի անջրպետով, ինչպես այդ պատկերացնում են մեր տեսաբաններից ոմանք։ Նախասկզբնական կուտակման պրոցեսը ոչ միայն նախորդում է, այլև պատմականորեն միաձուլվում է կապիտալի կուտակման, այլ խոսքով, կապիտալիստական արտադրության և վերարտադրության նորմալ պրոցեսի հետ»[3]։

Պետք է ասել, որ դիսկուսիայի ժամանակ այս նույն թեզը պաշտպանել է դեռևս 1956 թ. ընկ. Բ. Առաքելյանը, ասելով. «Կապիտալի նախասկզբնական կուտակումը ժամանակագրորեն համընկնում է ֆեոդալիզմի ընդերքում կապիտալիստական արտադրական հարաբերությունների առաջացման, կապիտալիստական մանուֆակտուրայի առաջացման ժամանակաշրջանի հետ»[4]։

Նույն թեզն է պաշտպանել իր «Հայկական վերածնության հարցի շուրջը» հոդվածում ընկ. Հ. Գարրիելյանը, ուր նա՝ կապիտալի նախնական կուտակումը հենց կապիտալիզմի նախնական զարգացումն է համարում[5]։

Հակառակ վերը բերած դրույթների, ընկ. Վ. Կ. Զալոյանը նկատում է. «...Անհնարին է պատկերացնել կապիտալի նախասկզբնական կուտակման և կապիտալի կուտակման «միաձուլումը»։ Ասել, որ դրանք իրարից «տարանջատված» չեն «դարերի անջրպետով», նույնպես սխալ է»[6]։

Ընկ Վ. Զալոյանը այդ, իր կողմից հայտնաբերած սխալը չի բացահայտում և չի հիմնավորում որևէ պատմական տվյալով, պատմական տեղեկանքով. իսկ նա պարտավոր էր այդ անել, որովհետև ընկ. Աշոտ Հովհաննիսյանը

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 152—171։
[2] Նույն տեղում, 1959, № 1, էջ 203—223։
[3] Նույն տեղում, էջ 206։
[4] «Ցեղկագիր», 1956, № 3, էջ 101։
[5] Նույն տեղում, № 6, էջ 94։
[6] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 154։

շեշտում է, որ «նախասկզբնական կուտակման պրոցեսը ոչ միայն նախորդում է, այլ պատմականորեն միաձուլվում է կապիտալի կուտակման, այլ խոսքով, կապիտալիստական արտադրության և վերարտադրության նորմալ պրոցեսի հետ»։

Իր տեղում մենք քննարկեցինք թե արդյո՞ք կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը սահմանափակվում է միայն ֆեոդալիզմի շրջանակներով, տեսանք, որ նախասկզբնական կուտակման և կապիտալիստական արտադրաեղանակի սկզբնավորման մեջ «դարերի անջրպետ» չկա, այլ կա իրոք միայն «միաձուլում»։

Ընկ. Վ. Ջալոյանը հերքում է «միաձուլման» թեզը—ելնելով նախասկզբնական կուտակման իր կոնցեպցիայից։ Ընկ. Վ. Ջալոյանի կոնցեպցիայով ստացվում է, թե դարերի ընթացքում տեղի է ունենում հարստությունների կուտակում մի բևեռում և դարերի ընթացքում էլ ունեզրկում՝ մյուս բևեռում և այդ դարերն անցնելուց հետո միայն այդ բևեռները ինչ-ինչ պատճառով միանում են, որով և սկսվում է կապիտալիստական արտադրաեղանակի դարաշրջանը։ Ամենամեծ «զիջումը», որ անում է ընկ. Վ. Ջալոյանը դա հետևյալն է. «Միանգամայն ճիշտ կլիներ ասել, որ նախասկզբնական կուտակումը միայն պոտենցիալ կերպով, բայց բնավ ոչ իրականում, իր մեջ կրում է կապիտալիստական կուտակումը»... «Առևտրա-վաշխառուական բուրժուազիան և քաղաքային ազատ չքավորությունը, որոնք միայն պոտենցիալ կերպով, բայց բնավ ոչ իրականում հանդիսանում են արտադրության կապիտալիստական եղանակի հիմնական անտագոնիստական դասակարգերը»[1]։

Իրավացիորեն հարց է ծագում. մինչև ե՞րբ են մնում «պոտենցիայի» մեջ կուտակված փողային հարստությունները և արտադրության միջոցներից անջատված աշխատավորական հոծ մասսաները։ Ընդունենք մի բոպե, որ փորրամասնության ձեռքին կուտակված հարստությունը կարող էր «դարերով» մնալ «պոտենցիայի» մեջ։ Իսկ ունեզրկված մասսա՞ն. կարող է՞ր արդյոք նա «դարերով» մնալ «պոտենցիայի» մեջ. բայց ո՞րտեղից և ի՞նչ ճանապարհներով կարող էր հայթայթել այդ մասսան իր ապրուստի միջոցները։ Անշուշտ քաղաքային համքարությունները չէին կարող կլանել նրան, իսկ հողատիրական կալվածքներում տիրում էր ճորտային աշխատանքը. ո՞րտեղ օգտագործվեց այդ մասսան, ընկ. Վ. Ջալոյանի կոնցեպցիան այս հարցին պատասխան չի տալիս. մինչդեռ Կ. Մարքսի կոնցեպցիան այդ պատասխանը տալիս է. «Արտադրության նախկին եղանակների և բանվորի դեպի աշխատանքի օբյեկտիվ պայմաններն ունեցած հարաբերության եղանակների քայքայման ժամանակները անվիճելիորեն հանդիսանում են նույն այն ժամանակը, երբ փողային հարստությունը... փոխարկվում է կապիտալի։ Կուտակվող փողային կապիտալը սիստեմատիկարար հոսեց դեպի արտադրություն. ունեզրկված, բռնի կերպով արտադրության միջոցներից անջատված աշխատավորների հոծ մասսան դիմեց նույնպես դեպի արտադրություն. ուժեղ թափ ստացան արդեն ցեխերի կողքին առաջացած, գոյություն ունեցած մանուֆակտուրաները և գյուղատնտեսական կապիտալիստական ֆերմաները։

[1] «Տեղեկագիր», 1953, № 12, էջ 103։

[2] Журнал «Пролетарская революция», 1939, № 3, էջ 178 (ընդգծումը Մարքսինն է)։

Այդ միավորման մասին է նշում Մարքսը, երբ գրում է. «Դաղութային սիստեմ, պետական պարտքեր, հարկերի ճնշում, հովանավորման սիստեմ, առևտրական պատերազմներ և այլն,— բուն մանուֆակտուրային ժամանակաշրջանի այս ընձյուղները վիթխարի չափերով աճում, տարածվում են խոշոր արդյունաբերության մանկական շրջանում»[1]։

XV դարի վերջերից սկսվող մի դարաշրջան էր դա, երբ աշխարհագրական հայտնագործությունների հետևանքով տեղի ունեցան շուկաների շեշտակի լայնացում, առևտրի ուժեղ վերելք, ֆեոդալական զինախմբերի ցրում, գյուղացիության ունեզրկում, քաղաքների արհեստագործության համքարությունների և գյուղական արդյունաբերության զարգացում, դա մի անցման շրջան էր, երբ կուտակված փողային կապիտալը օգտագործելով առկա (այդ) նախադրյալները, ներդրվեց արտադրության մեջ, ներդրավելով ունեզրկված մասսաներին։

Իհարկե, արտադրությունը, մանուֆակտուրաները կամ ֆերմաները միանդամից և ամբողջովին չկլանեցին հոծ մասսաներին. «Ֆեոդալական զինախմբերի ցրման հետևանքով վտարված և ցնցումներով իրագործվող բռնի սեփականազրկության միջոցով հողից պոկված մարդիկ, օրենքից դուրս հայտարարված այդ պրոլետարիատը—ամենևին նույնպիսի արագությամբ չէր կլանվում զարգացող մանուֆակտուրայի կողմից, ինչպես արագ լույս աշխարհ էր գալիս»[2]։ Արտադրության միջոցներից և կենսական միջոցներից սեփականազրկված մասսաների գոյության միակ աղբյուրը կարող էր լինել կամ իրենց աշխատուժի վաճառումը, կամ մուրացկանությունը, ավազակությունը, թափառաշրջիկությունը։ Պատմականորեն, ասում է Մարքսը, հաստատված է, որ իրենց սովորական կենսաշավղից հանկարծակի դուրս քաշված մարդիկ, չկարողանալով հարմարվել «նոր կացության կարգապահությանը», փորձեցին զբաղվել վերջիններով, այսինքն—մուրացկանությամբ, ավազակությամբ, թափառաշրջիկությամբ։ «Բայց այդ ուղուց նրանք կախաղանների, անարգանքի սյուների ու մտրակների միջոցով քշվեցին դեպի աշխատանքի շուկան տանող նեղ ճանապարհը»[3]։

Այսպիսով, սխալ է «դարերի անջրպետ» դնել նախասկզբնական կուտակման և կապիտալիստական արտադրաեղանակի սկզբնավորման միջև։

Անցնենք ընկ. Վ. Զալոյանի վիճարկած երկրորդ դրույթին։

«Հեղինակը (ընկ. Աշոտ Հովհաննիսյանը—Ա. Ե.) սխալվում է,—գրում է ընկ. Վ. Զալոյանը,— երբ «փոխանակային հարաբերությունների ոլորտը» անջատում է արտադրական հարաբերությունների ոլորտից։ Նա մոռանում է, որ այդ երկուսը մեկ միասնական պրոցեսի իրողություններ են, որ մեկը առանց մյուսի տեղի ունենալ չի կարող»[4]։

Մեղ թվում է, որ ընկ. Զալոյանը իրարից չի տարբերում երկու հարաբերակցություն. բաշխման հարաբերությունների և արտադրական հարաբերությունների հարաբերակցությունը և փոխանակային հարաբերությունների ոլորտի և արտադրական հարաբերությունների ոլորտի հարաբերակցությունը։

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 790։
[2] Նույն տեղում, էջ 767 (ընդգծումները մերն են—Ա. Ե.)
[3] Журнал «Пролетарская революция», 1939, № 3, էջ 180։
[4] «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 3, էջ 135։

Երբ Մարքսը խոսում է հասարակական արտադրության և վերարտադրության պրոցեսի մասին, այո, նա նշում է, որ տվյալ բաշխման հարաբերությունները պայմանավորված են և արտահայտություններն են պատմականորեն որոշակի արտադրական հարաբերությունների։ Այսպես, կապիտալիստական հասարակարգում բաշխման հարաբերություններ են—աշխատավարձ, շահույթ, ռենտա, այս հարաբերությունները պայմանավորված են կապիտալիստական արտադրական հարաբերություններով—կապիտալիստ և բանվոր, հավելյալ արժեքի արտադրություն, շահագործում։ «Կապիտալիստական բաշխումը տարբեր է բաշխման այն ձևերից, որոնք առաջանում են արտադրության այլ եղանակներից և բաշխման ամեն մի ձև անհայտանում է արտադրության այդ որոշակի ձևի հետ միասին, որին նա համապատասխանում է և որից նա բխում է»[1]։

Ընկ. Վ. Զալոյանը ճիշտ կլիներ, եթե իր սահմանումը, այն է՝ «այդ երկուսը միասնական պրոցեսի իրողություններ են», տարածեր բաշխման հարաբերությունների և արտադրական հարաբերությունների հարաբերակցության վրա։ Բայց նա սխալվում է, երբ այդ սահմանումը տարածում է փոխանակային և արտադրական ոլորտների վրա, և գտնում, որ սխալ է փոխանակային հարաբերությունների ոլորտը անջատել արտադրական հարաբերությունների ոլորտից։

Տեսնենք անջատո՞ւմ է արդյոք Կ. Մարքսը փոխանակային ոլորտը արտադրության ոլորտից։ «Կապիտալի, իբրև վաճառականական կապիտալի ինքնուրույն ու գերակշռող զարգացումը նշանակում է, որ արտադրությունը դեռ կապիտալին չի ենթարկված, համազոր է ուրեմն կապիտալի մի այնպիսի զարգացմանը, որը կատարվում է արտադրության հասարակական մի ձևի պատվանդանի վրա, որը նրան օտար ու նրանից անկախ է, հետևաբար, վաճառականական կապիտալի ինքնուրույն զարգացումը հակառակ հարաբերական է հասարակության տնտեսական ընդհանրական զարգացման նկատմամբ»[2]։ Ի՞նչ է հետևում այստեղից. պատմական որոշ ժամանակաշրջանում, վաճառականական կապիտալի, առևտրի, առևտրական հարաբերությունների, փոխանակային հարաբերությունների շարժումը, զարգացումը կարող է տեղի ունենալ այնպիսի արտադրական հարաբերությունների պատվանդանի վրա, որոնք օտար ու անկախ են այդ փոխանակային հարաբերություններից, օրինակ, երբ առևտուրը, փողի և ապրանքի շրջանառությունը, սպասավորում է արտադրության ամենատարբեր կազմակերպություն ունեցող ոլորտներ, հնադարյան համայնական տնտեսությունը, անտիկ աշխարհի արտադրողների, ստրկատիրական տնտեսությունը և այլն։

Կ. Մարքսը հենց այդ անջատում բառն էլ է գործածում. «Վաճառականի ինքնուրույն կարողությունը, իբրև կապիտալի տիրապետող ձև, ներկայացնում է շրջանառության պրոցեսի անջատումը նրա ծայրաթևերի հանդեպ, իսկ այս ծայրաթևերը հենց իրենք փոխանակություն անող արտադրողներն են։ Այս ծայրաթևերը պահպանում են իրենց ինքնուրույնությունը շրջանառության պրոցեսի հանդեպ, իսկ այս պրոցեսն էլ նրանց հանդեպ։ Արդյունքն այստեղ առևտրի շնորհիվ է ապրանք դառնում։ Այստեղ առևտուրն է, որ արդյունքները կերպարանափոխելով ապրանքների է փոխարկում, և ոչ թե արտադրված ապ-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս II, էջ 424։
[2] Նույն տեղում, մաս I, էջ 314։

բանն է, որի շարժումն առևտուր է դոյացնում»[1]։ Այսպիսով տեսնում ենք, որ պատմական զարդացման պրոցեսում եղել է ժամանակ, երբ շրջանառության ոլորտը անջատված է եղել արտադրության ոլորտից։ «Շրջանառության այս անջատումը, որի պայմաններում արտադրության ոլորտները միմյանց հետ շաղկապվում են մի երրորդ անդամի միջոցով», արտահայտում է առաջինը—որ շրջանառությունը դեռ չի տիրացել արտադրությանը, «այլ նրան հարաբերում է իրրև դրսից տրված նախադրյալի» և երկրորդ, որ «արտադրության պրոցեսը դեռ իր մեջ չի ընդդրկել շրջանառությունն իրրև մի սոսկական մոմենտ»[2]։ Ինչպես տեսնում ենք, շրջանառության ոլորտի և արտադրական ոլորտի հարաբերակցությունը, կամ փոխանակային և արտադրական հարաբերությունների հարաբերակցությանը Կ. Մարքսը ցուցարերում է կոնկրետ պատմական մոտեցում։ Եղել են դարաշրջաններ, երբ շրջանառության ոլորտը անջատված է եղել արտադրության ոլորտից, մինչդեռ կապիտալիստական արտադրական եղանակի ժամանակ վերջ է տրվում այդ անջատմանը. առևտրական կապիտալը դադարում է իր ինքնուրույն շարժումից, դրկվում իր շահույթի նախակապիտալիստական աղբյուրներից, նա դառնում է արդյունաբերական կապիտալի շարժման ձևերից մեկը և նրա շահույթի աղբյուրն է հանդիսանում հավելյալ արժեքի մի մասը։

Երրորդ դրույթը։ Ընկ. Վ. Զալոյանը քննադատում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանի կողմից բերված հետևյալ արտահայտությունը. «Կապիտալիստական հարաբերությունների զարդացման ելակետը, Մարքսի ուսուցման համաձայն, բանվորի ստրկացումն է»։ Ընկ. Վ. Զալոյանը, չբերելով մեջբերման շարունակությունը, որտեղ ընկ. Աշոտ Հովհաննիսյանը բացահայտում է այդ միտքը, գտնում է, որ դա մարքսիստական չէ։

Նախ—ո՞ւմ արտահայտությունն է «բանվորի ստրկացում» արտահայտությունը։ Այս նույն կոնտեքստի մեջ—դա Մարքսի գործածած արտահայտությունն է և այն էլ ոչ մեկ անդամ. «ինչպես վարձու բանվորին, այնպես էլ կապիտալիստին ստեղծած զարկացման ելակետը բանվորի ստրկությունը եղավ»[3], կամ՝ «Բայց կապիտալիստական արտադրությունը պահանջում էր ընդհակառակը, հենց ժողովրդական մասսաների ստրկական դրություն»[5]։ Իհարկե ոչ Մարքսը և ոչ էլ նրա դրույթը շարադրող ընկ. Աշոտ Հովհաննիսյանը «բանվորների ստրկություն», կամ «ժողովրդական մասսաների ստրկական դրություն» արտահայտության մեջ չեն դնում այն բովանդակությունը, ինչ որ վերագրում է ընկ. Վ. Զալոյանը իր ընդդիմախոսին։ Այս արտահայտությունը—«ստրկացում» «ստրկական դրություն»—ունի միայն մի բովանդակություն. ինչպես ստրուկներն էին զուրկ արտադրության միջոցներից, այնպես էլ կապիտալիստական արտադրաեղանակն էր պահանջում այն մարդկանց առկայությունը. որոնք զուրկ են արտադրության միջոցներից. սա է ընդհանուրը ստրկական շրջանի ստրուկների և կապիտալիստական շրջանի պրոլետարների միջև։ Բայց այդ ընդհանուրը նշելուց հետո Մարքսը և նրա դրույթը շարադրող ընկ. Աշոտ Հովհաննիսյանը անմիջապես անցնում են այն տարբերությանը, որը կա շա-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, մաս I, էջ 314։
[2] Նույն տեղում, էջ 315։
[3] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 204։
[4] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 748 (ընդգծումները մերն են—Ա. Ե.)։
[5] Նույն աեղում, էջ 752 (ընդգծումները մերն են—Ա. Ե.)։

հագործման ձևերի մեջ։ Նույն հոդվածի 206 էջում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը «բանվորների ստրկացումն է» նախադասությունից հետո բերում է Մարքսի խոսքերը. «Այդ զարգացումը,—գրում է Մարքսը,—բանվորի ստրկացման ձևափոխությունն է, ֆեոդալական շահագործման փոխարկումը կապիտալիստական շահագործման»[1]։ Նույն կոնկրետացումն է անում Մարքսը Կապիտալի 752 էջում. «Բայց կապիտալիստական արտադրությունը պահանջում էր ընդհակառակը, հենց ժողովրդական մասսաների ստրկական դրություն, հենց նրանց փոխարկումը վարձկանների և նրանց աշխատանքի միջոցների փոխարկումը կապիտալի»[2]։

Մենք կանգ առանք մեր հոդվածի այս ենթաբաժնում միայն երեք դրույթների վրա, որոնք առաջադրվել էին ընկ. Աշոտ Հովհաննիսյանի հոդվածում և որոնք անհիմն կերպով քննադատվել են ընկ. Վ. Զալոյանի կողմից իր պատասխան հոդվածում։

* *

Ինչպես հայտնի է, բանավեճին մասնակցող հեղինակներից շատերը՝ հենվելով սկզբնաղբյուրների վրա, գտան, որ քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում «արտադրության նոր եղանակի սաղմեր» չկային, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում «վաղ բուրժուական հասարակության լիաբելության պրոցես» տեղի չէր ունենում, որ X—XIII դդ. Հայաստանում տեղի էր ունենում ոչ թե սեփականատեր արտադրողների բռնի անջատումը արտադրության միջոցներից և դրանց վերածումը կապիտալի, այլ գյուղացիների փախուստը քաղաք ճորտությունից կամ ճորտացման դաժան շահագործումից, որ քննարկվող ժամանակամիջոցում Հայաստանում չեն հայտնաբերված կապիտալիստական կոոպերացիայի կամ մանուֆակտուրայի հետքեր, ոչ էլ ֆերմերական, կապիտալիստական տնտեսություններ, որ ունեզրկված գյուղացիները արդյունաբերական պրոլետարների չեն վերածվել։

Բանավեճի այդ շրջանում ընկ. Վ. Զալոյանն իսկ ստիպված էր խոստովանել, որ ինքը ձեռքի տակ չունի «բավականաչափ ծանրակշիռ փաստեր, որոնք հաստատեին այդ ժամանակաշրջանում Հայաստանում արտադրության կոոպերացման նախնական ձևերի առկայությունը»[3] և որ «պատմությունը մեզ ուղղակի և ճշգրիտ հիմքեր չի տալիս այդպիսի պնդման համար»[4]։ Չնայած դրան, ընկ. Վ. Զալոյանը, վերլուծելով երկրի ընդհանուր տնտեսական կյանքը, ինչպես ինքն է ասում, հիպոթեզային ենթադրություն է անում այն մասին, թե «այն ժամանակվա Հայաստանի էկոնոմիկայում անպայման գոյություն են ունեցել պարզ կոոպերացիան ու մանուֆակտուրան, գերազանցապես վարձու աշխատանքի հիման վրա»[5]։

Անշուշտ նախատելի կամ բացասելի չէ գիտության մեջ հիպոթեզային ենթադրություն անելը, բայց միայն մի պայմանով, որ հետագա հետազոտու-

[1] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 206 և «Կապիտալ», հատ. I, էջ 748։

[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 753։

[3] «Տեղեկագիր», 1953, № 12, էջ 99։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում։

թյունները փաստերով, անվիճելի փաստերով հիմնավորեն, ապացուցեն այդ հիպոթեզային ենթադրությունը։ Իհարկե չի կարելի կանխակալ կերպով առհասարակ բացասել որևէ երկրում, այդ թվում և Հայաստանում, անգամ X—XIII դդ., կապիտալի նախասկզբնական կուտակման հնարավորությունը, որի «պատմությունը,—նշում է Կ. Մարքսը,— տարբեր երկրներում տարբեր դուռնավորում ունի, տարբեր փուլեր է անցնում, տարբեր կարգով և տարբեր պատմական շրջաններում»[1]։

Այդ բոլորը ճիշտ է. բայց այդ բոլորը, ինչպես նաև «հիպոթեզային ենթադրությունը» պետք է հիմնավորել սկզբնաղբյուրներից վերցրած փաստերով։ Միակ փաստը, որ բերեց ընկ. Վ. Չալոյանը հաստատելու համար իր «հիպոթեզային ենթադրությունը» (հռչակավոր «վերակացուի» փաստը) հերքվեց ընկ. Լ. Խաչիկյանի կողմից[2]։

Ընթերցողները և բանավեճին հետևողները սպասում էին, որ ընկ. Վ. Չալոյանը կամ կհամաձայնի ընդդիմախոսների հետ, այսինքն կընդունի, որ պատմական փաստական նյութը չի հաստատում իր «հիպոթեզային ենթադրությունը» և դրանով վերջ կտրվի բանավեճին, կամ թե կշարունակի սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, կգտնի պատմական փաստեր, հանդես կգա դրանցով հիմնավորելու իր տեսակետը։ Սակայն, ցավոք սրտի, ընթերցողների և բանավեճին հետևողների սպասումները չարդարացան. ընկ. Վ. Չալոյանը ոչ մեկն արավ և ոչ էլ մյուսը։ Առ այսօր նա իր պատասխան հոդվածում կրկին առաջ է քաշում կապիտալի նախասկզբնական կուտակման մի յուրօրինակ տեսություն, որի վրա հիմնվելով կամենում է մի կերպ արդարացնել իր կոնցեպցիան Հայաստանում X—XIII դդ. իբր թե տեղի ունեցած կապիտալի նախասկզբնական կուտակման և Հայկական վերածնության մասին։

## ВОКРУГ МАРКСОВОЙ ТЕОРИИ О ПЕРВОНАЧАЛЬНОМ НАКОПЛЕНИИ КАПИТАЛА

А. М. ЕГИАЗАРЯН

(Резюме)

Среди историков, экономистов и философов уже ряд лет продолжается дискуссия об Армянском возрождении и в связи с ним о якобы имевшем место в Армении в X—XIII вв. процессе первоначального накопления капитала.

Сторонники этой концепции, в частности тов. В. Чалоян, утверждают, что так как в рассматриваемый период в Армении происходил процесс сосредоточения богатств в руках меньшинства, обозначилось отделение производителя от средств производства и образование «черни», то следовательно, Армения X—XIII вв. переживала эпоху первоначального накопления капитала, прерванную, однако, нашествием монголов в Закавказье.

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, էջ 749։
[2] «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 29—50։

Ссылаясь на работы Маркса и Ленина, автор статьи показывает, что сторонники указанной выше концепции неправильно трактуют марксову теорию первоначального накопления капитала.

В содержание первоначального накопления капитала классики марксизма вкладывали не вообще сосредоточение богатств в руках меньшинства и образование «черни» (этот процесс происходил и в античном мире, и в рабовладельческом Риме, и при феодализме, в течение всего средневековья), а тот процесс, который превращает, с одной стороны, общественные средства производства и средства жизни в капитал, а с другой стороны — непосредственных производителей в наемных рабочих; это процесс, создающий капиталистические отношения; первоначальное накопление капитала в марксистском понимании характеризуется этими специфическими и исторически обусловленными чертами.

В X—XIII вв. в Армении *такого* процесса не было, а потому рассматриваемая концепция является неверной.